ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ Քննադատական մտածողության զարգացումը՝ որպես կրթության առաջնային նպատակ

Կազմեց՝ Արմինե Թումասյան

(անուն, ազգանուն)

«Կապանի N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….3

Քննադատական մտածողություն: Նպատակն ու խնդիրները……..5

Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում…….6

Քննադատական մտածողության զարգացման մեթոդները……..……..7

Քննադատական մտածողության կիրառումը…….8

Քննադատական մտածողության զարգացումը գրականության ուսուցման գործընթացում……9

Հետազոտական մաս……...……10

Եզրակացություն……..……....14

Օգտագործված գրականության ցանկ…….……15

Հավելված 1……...……16

Հավելված 2……18

Հավելված 3……....20

Ներածություն

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Այս հետազոտության նպատակն է ստեղծել հիմք ձևավորելու քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ, որն իր հերթին կարող է գործիք հանդիսանալ ինքնության հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման, կարգավորման և հաշտեցման համար: Այսօր հաճախ է շեշտվում այն մոտեցումը, որ դպրոցի նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր դպրոցն ունի առավել բարդ առաքելություն՝ ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Քննադատական մտածողությունը նպաստող հմտությունների զարգացումը կարևորում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից: Քննադատական մտածողությունն իրենից ներկայացնում է տեղեկատվությունը վերահիմաստավորելու և ձևավորելու բարդ գործընթաց, որը կատարվում էգաղափարներն ու միջոցները ստեղծագործաբար համադրելու միջոցով: Դրա կիրառումը հնարավոր է բոլոր տարիքներում: Երբեմն կարծիք է հնչում, որ միայն ավագ դպրոցի աշակերտները կարող են ներգրավվել այդ գործընթացում: Սա բավականին սխալ պատկերացում է: Կրտսեր դպրոցի երեխաները ևս պատրաստակամորեն են մասնակցում բարդ խնդիրների լուծում պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չէ՞ որ գիտելիքն արժեքավորէ, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Ապագան պատկանում է նրանց, ովքեր կկարողանան տեղեկատվությունը քննադատաբար վերլուծել և կերտել սեփական ճշմարտությունը: Քննադատական մտածողությունը ինքնուրույն 4 մտածողություն է: Քննադատորեն մտածող մարդն առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում մեկ ուրիշի տեսակետը: Նա կարողանում է մտածել և ինքնուրույն, ազատ ու անկաշկանդ արտահայտել իր կարծիքները: Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում նոր մոտեցում է, որը վերջին տարիներին լայն տարածում է գտել: Այս մոտեցումը միաժամանակ հին պատմական արմատներ ունի: Հայտնի են

Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ. Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝ աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:Քննադատական մտածողությունը մտածելու մի եղանակ է, որը պահանջում է կարդալ, ընկալել տրված նյութը, որից հետո մտածել դրա մասին, վերլուծել, համեմատել, գնահատել, գտնել այդ նյութի կապը կյանքի հետ, կյանքում դրա կիրառման հնարավորությունը: Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն ամերիկյան մանկավարժներ Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք: Քննադատական մտածողություն եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այնզուգորդվում է քննադատել բառին: Սակայն այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:

Քննադատական մտածողություն:Նպատակն ու խնդիրները

Չնայած այն համընդհանուր համաձայնությանը, թե որքան կարևոր է քննադատական մտածողությունը, վերջինիս միասնական սահմանում թերևս չկա:Հայերենում խնդիրն առավել բարդ է,քանի որ տերմինը հայերեն է թարգմանվում անգլերենից և գոյություն ունեցող թարգմանությունը հաճախ չի արտացոլում այն ընդգրկուն հասկացությունը, որը ներդրված է անգլերեն տերմինի մեջ:Այսպես հայերենում ,,Քննադատական մտածողությունը,, ենթադրում է պարտադիր քննադատություն խնդրո առարկայի շուրջ,մինչդեռ ,critical thinking, արտահայտությունն առավել ընդգրկուն է և ենթադրում է քննողական մոտեցում,այսինքն, խնդրո առարկայի բազմակողմանի քննարկում:Հետևաբար առավել նպատակահարմար կլինի եթե ,criticalthinking,-ը թարգմանվեր ,,քննողական մտածողություն,,: Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է,որպես ,,ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել ,,: Միքայել Սկրիվենը և Ռիչարդ Փոլը նշում են,որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և /կամ հաղորդակցության միջոցովհավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու և գնահատելու մտավոր գործընթացը, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման և գործողությունների համար: Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար,ուսումնառության յուրաքանչյուր փուլում: Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը: Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտձևավորվում է աշխարհայացք, որը դուրս է նախապաշարմունքներից , ինքնուրույն վերաբերմունք այս կամ այն երևույթների հանդեպ: Քննադատական մտածողությունը մտավոր բարդ գործընթաց է, որն սկսվում է տեղեկատվությամբ նավարտվում որոշման կայացմամբ:

Քննադատական մտածողության անհրաժեշտությունը դպրոցում

Այսօր Հայաստանի կրթական բարեփոխումներով շահագրգիռ մանկավարժները լուրջ որոնումների մեջ են: Դրանք հիմնականում նպատակաուղղված են դասավանդման արդյունավետությունը բարձրացնող նոր մեթոդների, հնարների, եղանակների հայտնագործմանը և գործնականում կիրառելու խնդիրներին: Համաշխարհային մանկավարժության մեջ արդեն կան որոշակի նվաճումներ, որոնք հասանելի են նաև հայ ուսուցչին և հաջողությամբ կարող են գործադրվել մեզանում: Նման նորարական մեթոդների և գործելակերպի մի համակարգ է քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով /ՔՄԶԿԳՄ/ ծրագիրը: Այս ծրագրի նպատակն է՝ կրթել և դաստիարակել արժանավոր քաղաքացիներ՝ այսինքն՝ գործունյա,քննադատաբար մտածող անհատներ, որոնք ի զորու են լինելու ճիշտ կողմնորոշվել ժամանակակից կյանքի ամենաբարդ իրավիճակներում, ազատ ու անկաշկանդ հայտնել սեփական կարծիքները, ուշադիր ու հանդուրժող լինել այլոց կարծիքների հանդեպ և վստահաբար ստանձնել որոշումներ կայացնելու պատասխանատվությունը: ՔՄԶԿԳՄ ծրագրի համակարգն իրենից ներկայացնում է ուսուցման գործընթացի երեք փուլերից նյութը սովորելուց առաջ / ներածական /, նյութը սովորելու ընթացքում / հիմնական /, նյութը սովորելուց հետո / անդրադարձ/:

Քննադատական մտածողության զարգացման մեթոդները

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

▪ իրականացվել են զրույցի, դիտման մեթոդները,

▪ ուսումնասիրվել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները,

▪ անցկացվել է մանկավարժական գիտափորձի մեթոդը,

▪ կիրառվել են հետազոտությունների արդյունքների վերլուծման մաթեմատիկական մեթոդները /արձանագրում, գծապատկերի կազմում կազմում/:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

▪Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է որպես դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիա:

▪ Քննադատական մտածողության տեխնոլոգիան ներկայացվել է որպես տարրական դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա:

▪ Սահմանվել են մանկավարժական այն պայմանները, որոնք արդյունավետ են դարձնում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը դպրոցում:

▪ Մանկավարժության առաջ քաշած խնդիրների շարքում կարևորվում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը' որպես արդի հասարակական պահանջ:

▪ Քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, նպաստում է դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետությանը, ակտիվացմանը, սովորողների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Քննադատական մտածողության կիրառումը

▪ Ակադեմիական կյանքում

Կրթության ցանկացած մակարդակում քննադատական մտածողության ուժեղ կարողությունների զարգացումը ուսանողների համար ավելի մեծ ակադեմիական հաջողության հստակ նախադրյալ է: Քննադատական մտածողությունը կազմում է գրեթե յուրաքանչյուր կարևոր ակադեմիական հմտության հիմքը, որը դուք կցանկանայիք նշել: Այն սկսվում է հիմնական հասկացություններից, ինչպիսիք են այս բայերը միացնելը, օրինակ՝ գնահատել, ամփոփել, բացատրել, հիմնավորել և այլն, համապատասխան պատասխաններին: Այնուհետև այն հիմնվում է չմշակված տվյալների մեկնաբանության վրա, հասկանալով տարբեր արդյունքների հետևանքները և ազդեցությունները. Հասկանալով և բացատրելով իրերի միջև եղած տարբերությունները և ինչու դրանք գոյություն ունեն:

▪ Առօրյա կյանքում

Քննադատական մտածողությունը նկարագրելու մեկ այլ ձև պարզապես պարզ մտածելու և ռացիոնալ մնալու կարողությունն է, երբ բախվում ենք խնդրի կամ դժվարության: Աշխարհում շատ խնդիրներ սրվում են որոշ մարդկանց՝ ռացիոնալ լինելու կան բաները ճիշտ մտածելու անկարողությունից: Մարդիկ գործում են հապճեպ, իմպուլսիվ և չափազանց շատ որոշումներ են կայացնում զուտ զգացմունքների վրա: Մենք երբեք չենք վերացնի այդ հատկությունը մեզանից ամբողջությամբ, բայց երիտասարդ տարիքից հստակությունն ու ռացիոնալությունն ամրապնդելը կարևոր է:

▪Մեր կարիերայում

21-րդ դարը գիտելիքի տնտեսության նոր տունն է: Այնտեղ, որտեղ 19-րդ և 20-րդ դարերը բնութագրվում էին հիմնականում ֆիզիկական հմտություններով և արհեստներով, ապա նոր դարն այլ կերպ է բնորոշվում: Այժմ ինտելեկտուալ հմտությունները, ստեղծագործական ունակությունները, վերլուծական կարողությունները և հարակից այլ հմտությունները վեր են դասվում ամեն ինչից: Տեղեկատվությունն արագ տեմպերով կլանելու, հասկանալու և կիրառելու կարողությունը կարևոր է. և դա այն է, ինչ դուք ստանում եք քննադատական մտածողությունից:

Քննադատական մտածողության զարգացումը գրականության ուսուցման գործընթացում

Դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել եմ, որ մեր աշակերտներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդյունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

▪ զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան. որ իրենց կարծիքներն ու մտքերն արժեքավոր են

▪ ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին

▪ հարգանքով լսեն բազմազան կարծիքներ

▪ պատրաստ լինեն, ձևակերպեն և հարկ եղած դեպքում նաև կասեցնեն սեփական դատողությունները

Հետազոտական մաս (դաս 1-ին)

Հետազոտությունը կատարել եմ 9-րդ դասարանում, որտեղ սովորում են 25 աշակերտ:

Դասի թեման՝ Փավստոս Բուզանդ «Արշակ և Շապուհ»:

Մինչ նոր դասանյութին ծանոթանալը, առաջարկել եմ աշակերտներին՝ մտքերի տարափով (մտագրոհ) թվարկել այն ամենը ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն Արշակի և Շապուհի մասին՝ առանց մտահոգվելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու իրողությամբ: Այդ ամենը գրվեց գրատախտակին, ապա յուրաքանչյուր գրվածի շուրջ տարվեց քննարկում և մտքերի փոխանակում:

Մտքերի տարափ մեթոդի նպատակն էր խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը նոր նյութի նկատմամբ. Վեր հանել թեմայի վերաբերյալ իրենց ունեցած տեղեկությունները:Այս փուլում էական գործոնը այն էր. Որ ես հնարավորինս քիչ էի խոսում՝ ասպարեզը տրամադրելով աշակերտներին:

Հաջորդ փուլում սովորողները հաղորդակցվում էին նոր տեղեկատվության և նոր գաղափարների շուրջ: Այս փուլում գործածել եմ փոխգործուն գրառումների համակարգ՝ արդյունավետ ընթերցանության և մտածողության համար մեթոդը: Սեքստը լուռ ընթերցելիս աշակերտները մատիտով նշումներ էին կատարում այն հատվածների կողքին, որոնդ մասին գիտեին (+ նշանով) և այն հատվածների կողքի, որոնց մասին չգիտեին(- նշանով): Վերջին փուլը եզրահանգման փուլ է: Այս փուլում աշակերտների միջև ծավալվում է քննարկում, նրանք ծանոթանում են տարբեր գիտելիքների պատկերացումների, մտածում, բանավիճում, քննադատում: Այս փուլում աշակերտները քննարկման ենթարկեցին հայ գրականության պատմության մեջ ամենաշատ գեղարվեստական անդրադարձներ ստացած, բազմիցս կերպավորված արքաներից մեկին՝ Արշակ 2-րդին: Աշակերտների մի մասը Արշակ 2-րդին մեղադրեց ագահության, սնապարծության, թուլամորթության մեջ բերելով համապատասխան հիմնավորումներ, իսկ մյուս մասը նրան ընդունեց որպես ազգի ազատության ոգի, որը պետք է մեռներ ազատության մեջ՝ դեպի հավատի ու լույսի գալիքներ տանելով իր ժողովրդին:

Սովորողների ինքնուրույն գործունեության համեմատական



Արդյունքների վերլուծություն (1-ին դաս)

Հետազոտվողներից 25%-ը դրսևորել են ակտիվություն, 47%-ը պատասխանել են որոշ հարցերի, սակայն դրևորել են պասիվ վարքագիծ, իսկ 28%-ը չեն մասնակցել քննարկմանը:

Հետազոտական մաս (դաս 2-րդ)

Հետազոտությունը կատարել եմ 8-րդ դասարանում, որտեղ սովորում են 23 աշակերտ:

Դասի թեման՝ Նար-Դոս, «Ես և Նա»:

Դասը բաղկացած է երկու փուլից: Առաջին փուլում աշակերտները բեմականացման միջոցով ներկայացրին պատմվածքի «Նա» հատվածը (հավելված 1):

Երկրորդ փուլում աշակերտները հարցերի միջոցով ներկայացրին «Ես» հատվածը:

Երկրորդ փուլի համար նախատեսված հարցաշար.

1. Ո՞վ էր Ես-ը, որտե՞ղ և ո՞ր կուրսում էր սովորում:
2. Ի՞նչ ր նրա համար սիրած աղջկա գոյությունը:
3. Փառավոր ապագայի սպասումը ինչպե՞ս կործանվեց Ես-ի համար:
4. Իր հոգեկան ծանր վիճակից դուրս գալու նպատակով ի՞նչ քայլեր է ձեռնարկում Ես-ը:
5. Ինչպե՞ս է հուսալքումը կամաց-կամաց համակում Ես-ին: Կյանքի ի՞նչ ճանապարհ է ընտրում Ես-ը:

6. Ինչպե՞ս է Ես-ը աստիճանաբար դառնում կործանված մարդ:

Այնուհետև բեմականացման և հարցերի պատասխանների միջոցով աշակերտները փորձեցին համեմատել երկու հատվածների կերպարներին: Այս պատմությունները առաջն հայացքից չէին կարող առնչություն ունենալ միմյանց հետ: Բայց այստեղ երևում է, որ մարդկային զգացումները նման են աշխարհի տարբեր անկյուններում ու տարբեր ժամանակներում:

«Ես» հատվածի կերպարը	**«Նա» հատվածի կերպարը (Անտոնիո)**
▪Լինելով բուրժուական միջավայրի ծնունդ՝ սովոր էր հեշտ ու առանց դժվարությունների կյանքին, ինչի պատճառով էլ կործանվեց կյանքի առաջին իսկ հարվածից: ▪Լինելով թույլ կերպար՝ նա չկարողացավ պայքարել ինքն իր դեմ:	▪Չընկճվեց դժբախտ սիրուց, այլ ընդհակառակը՝ որպես մարտահրավեր ընդունեց դա, որովհետև իր միջավայրն էր ռեն այդպես դաստիարակել: Անտոնիոն, լինելով աշխատավոր դասակարգից, սովոր էր հանդիպելու և հաղթահարելու կյանքի խոչընդոտները: ▪Նա ներկայացնում է համառ ու նպատակասլաց երիտասարդի, ով մինչև վերջ չի դառնում իր զգացմունքների զոհը և կարողանում է սառը սրտոց լուծել իր վրեժը:

Դասը ամփոփվեց հետևյալ հարցերով.

1. «Մերժված սիրո» ուժը ինչ ազդեցություն ունեցավ այս երկու կերպարների վրա:
2. Եթե դուք լինեիք պատմվածքի հերոսը ի՞նչ կփոխեիք այս պատմվածքում:

Ուսուցման այս եղանակների ներդրումը նպատակ ուներ ապահովելու աշակերտների աշխարհընկալման ինքնուրույնությունը, զարգացնելու նրանց տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական երևակայությունը:



Արդյունքների վերլուծություն (2-րդ դաս)

Հետազոտվողներից 47%-ը դրսևորել են ակտիվություն, 35%-ը դրսևորել է պասիվ վարքագիծ, իսկ 18%-ը չի մասնակցել խմբային քննարկումներին:

Եզրակացություն

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները

✓ Կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք:

✓ Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղածփոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի:

✓ Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնաաշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/

✓ Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվումմիմյանց հետ:

✓ Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքներիհամակարգում:

✓ Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գիտամեթոդական հանդես նախաշավիղ 2. 2001, 2. 2006, 5-6. 2004

2. Խաչատրյան Ս. Գ. , Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրականդասարաններում, Գ. 2006.

3. ՀՀ ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն: Կրթության ազգային ինստիտուտ:Ուսուցիչների հինգօրյա վերապատրաստումների պլան և նյութեր, 2007:

4. Քննադատական մտածողության տեսության զարգացումը կրտսեր դպրոցում, Ծրագրեր և նյութեր, Երևան-2002

Հավելված 1

Հավելված 2

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան__Գրականություն դաս. 8-րդ ուսուցիչ՝ Ա. Թումասյան

Դասի թեման__Նար- Դոս, «Ես և Նա», էջ 123

Դասի նպատակները և խնդիրները

▪ գրական երկը ընթերցելու, դրա հիմնական միտքը ընկալելու կարողության զարգացում

▪ պատմվածքի բովանդակության իմացության և գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողության զարգացում

▪ կերպարների բնավորության բացահայտում, նրանց գործողությունների, հոգեբանական շարժառիթների ընկալում և մեկնաբանություն

▪ արտահայտչամիջոցները գտնելու և տարբերակելու կարողության զարգացում

▪ պատկերավոր արտահայտչամիջոցների դուրս գրում և աղյուսակների կազմում

Անհրաժեշտ պարագաներ__դասագիրք, Նար-Դոսի ստեղծագործությունների գիրքը, ցուցապաստառ, գրատախտակ, բեմական հագուստ, ջութակ, բեմի ձևավորման պարագաներ:

Միջառարկայական կապ_երաժշտություն, թատրոն, պատմություն, աշխարհագրություն

Վերջնարդյունքներ

▪ գրական ստեղծագործության ժանրային առանձնահատկությունների ընկալում

▪ նկարագրական- բնութագրական շարադրանքներ կերպարների բնավորության բացահայտման, նրանց գործողությունների հոգեբանական շարժառիթների վերաբերյալ

▪ բառային աշխատանք՝ անծանոթ բառերի դուրսբերում հոմանշային շարքերի կազմում

▪ սովորած բառերի արտահայտությունների կիրառումը սեփական խոսքում

Դասի ընթացքը

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը (1-2 րոպե)

Այս փուլում աշակերտները հարցերի միջոցով ամփոփեցին Նար- Դոսի «Ես և Նա» պատմվածքի սյուժեն: Այնուհետև «Նա» հատվածը ներկայացրին բեմականացման միջոցով:

Իմաստի ընկալման փուլ__Աշակերտները փորձեցին համեմատել այս երկու հատվածների կերպարներին տեաձև աղյուսակի միջոցով՝ պատմվածքից դուրս հանելով կերպարներներին բնութագրող տողերը: Այնուհետև դասը ամփոփվեց հետևյալ նախադասությամբ. «Մերժված սիրո ուժը ինչ ազդեցություն ունեցավ այս երկու կերպարների վրա»:

Կշռադատման փուլ__Այս փուլում աշակերտները բանավիճեցին միմյանց հետ հետևյալ հարցի շուրջ. «Եթե ես լինեի պատմվածքի հերոս, ինչ կփոխեի այս պատմվածքում»:

Տնային աշխատանք__Գրել շարադրություն «Մերժված սիրո ուժը» թեմայով: Գնահատվեցին ակտիվ աշակերտները միավորային գնահատականով:

Հավելված 3

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան__Գրականություն դաս. 9-րդ ուսուցիչ՝ Ա. Թումասյան

Դասի թեման__Փավստոս Բուզանդ «Արշակ և Շապուհ», էջ 29

Դասի նպատակները և խնդիրները

▪հայրենասիրության, ազգային-ազատագրական պայքարի, ազգային գաղափարների գիտակցում, արժեքային համակարգի ձևավորում

▪ գրական բնագրի արտահայտիչ ընթերցելու, դրա բովանդակությունն ու հիմնական գաղափարն ընկալելու կարողությունների զարգացում

▪ գրական ստեղծագործության բովանդակության իմացություն և գործողությունների զարգացման ընթացքը վերարտադրելու կարողության զարգացում

Անհրաժեշտ պարագաներ__դասագիրք, հեղինակի մասին կենսագրական տեղեկությունների, փաստերի, նյութերի հավաքում, համակարգում

Միջառարկայական կապ_երաժշտություն, թատրոն, պատմություն, աշխարհագրություն

Վերջնարդյունքներ

▪ իմանալ հատվածի ընդհանուր գաղափարը

▪ նկարագրական- բնութագրական շարադրանքներ կերպարների բնավորության բացահայտման, նրանց գործողությունների հոգեբանական շարժառիթների վերաբերյալ

▪ բառային աշխատանք՝ անծանոթ բառերի դուրսբերում հոմանշային շարքերի կազմում

▪ սովորած բառերի արտահայտությունների կիրառումը սեփական խոսքում

Դասի ընթացքը

Խթանման փուլի նկարագրությունը և տևողությունը (1-2 րոպե)

Այս փուլում աշակերտները հարցերի միջոցով ամփոփեցին Փավստոս Բուզանդի «Արշակ և Շապուհ» հատվածի սյուժեն: Կիրառել Խճանկար և Մտագրոհ մեթոդները:

Աշակերտները փորձեցին համեմատել Արշակի և Շապուհի կերպարները տեաձև աղյուսակի միջոցով՝ հատվածից դուրս հանելով կերպարներներին բնութագրող տողերը:

Կշռադատման փուլ__Այս փուլում աշակերտները բանավիճեցին՝ քննադատելով Արշակ 2-րդին՝ նշելով դրական և բացասական կողմերը:

Տնային աշխատանք__ Կատարել կերպարների վերլուծություն (Արշակի և Շապուհի կերպարները):